2668
№64
2668
3547
429

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՒ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԹԱՒՐԻԶՈՒ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հաստատուած 1 Մայիս 1898

1900

ԴԱՎՐԷԺ

Տպարան Թաւրիզի Հայոց Արամեան դպրոցի

14194

14/94

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ԹԱՒՐԻԶՈՒ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿ.

---

### ՆՊԱՏԱԿ

Շաբաթը մի անգամ հերթով և պարբերաբար թէ Ղալայի և թէ Լիլաւայի դպրոցների սրահում Հայ հասարակութեան տալ ձրի դասախօսութիւններ, զանազան հետաքրքիր, շահեկան և օգտակար նիւթերի մասին, ինչպէս՝ Գիտական, Գրական, Առողջապահական, Պատմական, Մանկավարժական, և այլն: Նիւթերը դասախօսութիւնից յետոյ կ'ենթարկւին հասարակական վիճաբանութեան:

---

### I

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1 — Ամէն հայ, առանց սեռի և կրօնի խտրութեան, կարող է անդամակցել, տարեկան վէց ղրան արծ. անդամակցական կանոնիկ տուրք վճարելով:

2 — Նոր անդամներ կ'ընդունւին նախկին մի անդամի առաջարկութեամբ և վարչութեան հաւանութեամբ:

3 — Ամէն անդամ իրաւունք ունի քւէարկու-

թեան մասնակցելու և ընտրելի լինելու:

4 — Իւրաքանչիւր անդամի անունը կը հրատարակւի ամէն տարի տպագրելի կանոնագրի յաւելուածում:

---

## II

## ՀԱՍՈՅԹ ԵՒ ԾԱԽՍ

5 — Ընկերութեան հասոյթի միջոցներն են. 1-Անդամավճար. 2-Գանձանակի հասոյթ. 3-Բացառիկ նուէրներ. 4-Վարչութեան անօրինած այլ և այլ միջոցներից գոյանալիք հասոյթ:

6 — Ընկերութիւնը կունենայ իր գանձանակը, որ երեկոյթների միջոցում ընկերութեան յառաջադիմութիւնը ցանկացողները իրանց կամաւոր նուէրները նրա մէջ կը ձգեն:

7 — Ընկերութիւնը իր հասոյթից կը հոգայ Լսարանի վերաբերեալ բոլոր ծախսերը, ինչպէս նաև թղթակցական, տպագրական, անհրաժեշտ գրքերի գնման, ևայլն ծախսերը:

---

## III

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

8 — Ընդհանուր ժողովը ներկայացնում է բոլոր անդամների թիւը:



9 — Ընդհանուր ժողովը գումարւում է տարին մի անգամ, և գաղտնի քւէարկութեամբ ընտրում է վարչական ժողով և նախորդ վարչութեան հաշիւը քննում:

10 — Ընդհանուր ժողովների որոշումները օրինաւոր կը համարւին, եթէ ներկայ լինեն Թաւրիզում գտնուող բոլոր անդամների թւի կէսը առաջին նիստում, իսկ եթէ կէսից վար լինի, երկրորդ նիստի մի հրաւէր ևս կ'ուղղւի անդամներին, այն երկրորդ նիստին ներկայից թիւը օրինաւոր կը համարւի:

11 — Ընդհանուր ժողովներին կը նախագահէ Ատրպատականի թեմի առաջնորդը կամ նրա փոխանորդը:

12 — Ընդհանուր ժողովի դիւանը կը կազմւի նոյն ժողովների նիստի միջոցում:

13 — Ընդհանուր ժողովը տարին մի անգամ քննում է ընկերութեան կանոնագիրը, և եթէ հարկ տեսնէ, բարեփոխելով վարչութեան միջոցաւ տպագրում է:

14 — Բացակայ և հեռաւոր անդամները կարող են իրանց ձայնը տալ մի ուրիշ անդամի, պաշտօնական նամակով իմացնելով՝ ընդհանուր ժողովի նախագահին, և կամ իրանց քւէները փակ նամակով ուղարկել ընդհանուր ժողովի նախագահին: Մի անդամ, իր ձայնով միասին,

երկու ձայնից աւելի չէ կարող ունենալ:

---

# IV

## ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

15 — Վարչական ժողովը բաղկանում է եօթը անդամից, առանց սեռի խտրութեան:

16 — Վարչական ժողովի պաշտօնավարութիւնը տեւում է մի տարի, և անդամները կարող են վերընտրուել:

17 — Վարչական ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրում է իր միջից Նախագահ, փոխ—նախագահ, գանձապահ, քարտուղար եայլն:

18 — Վարչական ժողովի անդամները չեն կարող կազմել ընդհանուր ժողովի դիւանը:

19 — Վարչական ժողովի որոշումները պիտի լինեն ձայների մեծամասնութեամբ և արձանագրուեն:

20 — Վարչական ժողովի պաշտօնն է Լսարանական Երեկոյթների անհրաժեշտ պէտքերն ու պատրաստութիւնները հոգալ:

21 — Վարչական ժողովի Նախագահը Լսարանական երեկոյթներին նախագահելու, դասախօսութիւնը և դասախօսողն յայտնելու, երեկոյթը բանալ և փակելու, և վարչական առանձին նիստերին նախագահելու իրաւունքը ունի:



22 — Վարչական ժողովը դասախօսութեանց նիւթերը ինքն է որոշում և յանձնում յարմար անձին. դրսից առաջարկուած նիւթերը քննելու, ընդունելու կամ մերժելու իրաւունքը ունի:

23 — Վարչութիւնը պիտի խնդրէ պ. պ. դասախօսներից դասախօսութիւնների դէթ ամփոփումը արձանագրէ կամ պահէ:

24 — Վարչական ժողովի Նախագահին պարտաւորութիւնն է, Լսարանական Երեկոյթները առնուազն երեք օր առաջ հասարակութեան յայտարարել, միշտ տպագրուած և ընկերութեան կնիքով կնքուած յայտարարութիւններով, որոնց մէջ պէտք է յիշատակուին դասախօսողի անունը և դասախօսութեան նիւթը:

25 — Վարչութիւնը պարտաւոր է իր տարեկան գործունէութեան մանրամասն հաշիւը և տեղեկագիրը մատուցանել ընդհանուր ժողովին:

26 — Գանձապահը Վարչութեան Նախագահի գրաւոր յանձնարարութեամբ միայն իրաւունք ունի ծախս անելու:

27 — Գանձապահը պարտաւոր է իր գանձած դրամների փոխարէն իր ստորագրութիւնը կրող տպագրուած ստացագրեր տալ:

28 — Վարչութիւնը ամէն տարի պարտաւոր է կանոնագրի յաւելուածում տպագրել տալ ան-

դամների անունները, վարչական ժողովները, իր հաշիւն և գործունէութեան տեղեկագիրը:

29 — Վարչութեան նախագահի մօտ է մնում ընկերութեան կնիքը այսպէս արձանագրուած — „Թաւրիզի Լսարանական Ընկերութիւն 1898“ —, և ընկերութեան կնիքը չը կրող որ և է գրութիւն անվաւեր և ոչ պաշտօնական է համարւում:

30 — Վարչական ժողովը պատրաստում է նաև իր ներքին և կարգապահական կանոնագիրը:

31 — Այս կանոնագիրը Ատրպատականի Թեմի Առաջնորդութիւնից վաւերանալուց յետոյ գործադրութեան է դրւում:

---

### Պատճէն վաւերագրի Ատրպատականի Թեմի Հայոց Առաջնորդարանի

« Դաւրիժու նորակազմ Լսարանական Ընկերութեան սոյն կանոնագիրն կարդալով, տեսաք որ յոյժ նըպաստաւոր մի ձեռնարկ է այդ ժողովրդեան մտաւոր զարգացման համար, ուստի կվաւերացնեմք մերով իսկական ստորագրութեամբ:

5 Մարտ 1898 Ցովսէփ Վարդապետ Սարաճեան

կնիք

---



## ԼՍԱՐ. ԸՆԿ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1 — Գեր. Տ. Սահակ Եպիսկոպոս Այվազեան, Առաջնորդ Հայոց Ատրպատականի Թեմին
2 — Աբէլ Բաղդասարեան
3 — Աբեդնագով Ալէքսանեան
4 — Ալէքսան Գուլմասեան
5 — Անդրէ Գուլմասեան
6 — Առաքել Աֆրիկեան
7 — Առաքել Ցարութիւնեան
8 — Ասլան Հայրապետեան
9 — Աստուածատուր Զաքարեան
10 — Աբրահամ Մելիք - Աբրահամեան
11 — Օր. Աստղիկ Տէր Ցարութիւնեան
12 — Տիկ. Արծուիկ Նազարբէկեան
13 — Արշակ Ղօրղանեան
14 — Արշակ Մեհրաբեան
15 — Աւետիս - խան Սարգսեան
16 — Բագրատ Ցովհաննիսեան
17 — Բաղդասար Մելիք - Սարգսեան
18 — Գէորգ Մելիք - Աբրահամեան
19 — Գրիգոր Աղաջանեան
20 — Գրիգոր Տէր - Ցակովբեան †
21 — Դաւիթ Կարապետեան
22 — Դաւիթ Շահգալդեան
23 — Երուանդ Ֆրանգեան
24 — Զաքարիա Նազարբէկեան
25 — Թադէոս Աֆթանդիլեան
26 — Տիկ. Իսկուհի Ղ. Ցակովբեան
27 — Լևոն Գէորգեան

28 — Խաչատուր Տէր - Զաքարեան
29 — Խաչիկ Սարաճեան
30 — Կարապետ Բաբայեան
31 — Կարապետ Յովհաննիսեան
32 — Դոկտ. Կարապետ Փաշայեան
33 — Տիկ. Հեղինէ Ժօրժ
34 — Տիկ. Հռիփսիմէ Գէներճեան
35 — Օր. Հռիփսիմէ Փուզինեան
36 — Ղազար Յակոբեան
37 — Ղազար Օհանեան
38 — Մարգար Միքայէլեան
39 — Օր. Մարիամ Բօյաղջեան
40 — „ Մարիամ Պետրոսեան
41 — „ Մարիամ Սէթխանեան
42 — Մարտիրոս Յարութիւնեան
43 — Մարտիրոս Նազարբէկեան
44 — Մելքոն Շահրալեան
45 — Միրզա Մելիք - Սայադեան
46 — Միքայէլ Զառաֆեան
47 — Մխիթար Մամեան
48 — Յակոբ Մելիք - Սարգսեան
49 — Յարութիւն Միրզայեան
50 — Յարութիւն Յարութիւնեան
51 — Յոնան Դաւթեան
52 — Տիկ. Յորտանս Դաւթեան
53 — Նազար Գորոյեան
54 — Նարիման Մելիք Զոհրաբեան
55 — Ներսէս Բալալեան
56 — Նիկոլա Ալէքսանեան
57 — Նիկօլա Մելիք - Բարսեղեան



58 — Նիկօլա Տէր - Օհանեան
59 — Օր. Նունէ Շահրալեան
60 — Դոկտ. Պետրոս Ասլանեան
61 — Պետրոս Խաչատրեան
62 — Պետրոս Պետրոսեան
63 — Ջիբրայէլ Բուդաղեան
64 — Ռափայէլ Բուդաղեան
65 — Ռափայէլ Մովսիսեան
66 — Սարգիս Անդրէասեան
67 — Սարգիս Մուրայջեան ( Ատրպետ )
68 — Սալոմիէլ Գասպարեան
69 — Սեդրաք Պետրոսեան
70 — Սիրաք Գրիգորեան
71 —Ստեփան Թադէոսեան
72 — Սրապիոն Գրիգորեան
73 — Տիկ. Սրբուհի Ամատունեան
74 — Օր. Սօնա Մելիք - Խաչատրեան
75 — Վահան Բժշկեան
76 — Վարդան Տէր - Օհանեան
77 — Տիկ. Վիրգինէ Կ. Փաշայեան
78 — Տիգրան Թովմասեան
79 — Տիգրան Յովհաննիսեան
80 — Տիգրան Ռաշմաճեան

---

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

---

Ընկերութիւնս 1898 Մարտ ամսին ունէր 61 անդամ. մինչև 1899 Սեպտ. 1, անդամների թիւը բարձրացել է 124 ի: Միքանի անդամների արտա-

սահման գնալու և մի քանիսը ևս հրաժարուելու պատճառով ընկերութիւնս այժմ ունի 80 անդամ։

Ընկերութիւնս նկատելով, որ ամառուայ չորս ամիսներում գիշերային դասախօսութիւնները շարունակել անյարմար է, և նկատելով, որ պարսից Մուհարրէմ ամսում և եկեղեցական զանազան մեծ տօներին և ազգային թատերական ներկայացումներին միջոցում անկարելի է դասախօսութիւններ կազմել, և հետևաբար այս արգելքներով տարւայ ընթացքում հազիւ կարելի էր 12 կամ 14 դասախօսութիւն տալ փոխանակ 24 ի, որոշեց հասարակութեանը տալու համար ամէն շաբաթ կազմել Լսարանական երեկոյթներ։

1898 Մարտ 1 ից 1899 Մայիս 1, ընկերութիւնս տուել է 34 դասախօսութիւն։

Ընկերութիւնս իր խորին շնորհակալութիւնը յայտնում է՝ այն բոլոր ուսումնասէր և ազնիւ անձնաւորութեանց, որոնք բարեհաճել են ընկերութեանս նուիրել փող, գիրք, լրագիր, և այլն։

Պարսկաստանում դասախօսութիւններ պատրաստելու համար աղբիւրներ գտնելը խիստ դժուար և գրեթէ անկարելի լինելով, ընկերութիւնս պ. պ. դասախօսողների տրամադրութեան տակ դնելու պայմանաւ գնել է զանազան գրքեր։

Ներքոյ հաշուեկշռի համաձայն 1898 Մարտ 1—ից 1899 Սեպտ. 1, ընկերութեանս մուտքն եղել է -817- ղրան (2 ղրանը մի ֆրանգ արժէ) և ելքը 506 ղրան. պատրաստ ունի 283 ղրան։



Ընկերութեանս անցեալ տարւայ կանոնադրութեան մի քանի յօդուածները ընդհանուր ժողովի որոշմամբ բարեփոխուած են։

Դասախօսութեանց միջոցում երկսեռ ունկնդիրների մօտաւոր թիւն եղած է 80—120 հոգի։

Ընկերութիւնս պարտք է համարում նաև իր խորին շնորհակալութիւնը յայտնել այն ամէն անձնաւորութեանց, որոնք դասախօսութիւններ կարդալով, անդամ գրուելով և դասախօսութեանց ներկայ գտնուելով, ընկերութեան յառաջադիմութեան մեծ զարկ և մղում տուած են։

---

1898 Մարտ 1-ից 1899 Սեպ. 1 ստացուած

## ՆՈՒԷՐՆԵՐ

1 — Պ. Խաչիկ Յ. Սարաճեանից, դրամական նուէր՝ ղրան 20։

2 — Տիկին Վիրգինէ Կ. Փաշայեանից՝ երկու գիրք, Պատմութիւն Ընկերական Գիտութեանց (Մ. Մամուրեանի) և Դաստիարակութիւն (Սպէնսըր)։

3 — Պ. Բժիշկ Կ. Փաշայեանից, մի հաշուետ.։

4 — „ Ռուբէն Աֆրիկեանից, դրամական նուէր՝ ղրան 20։

5 — „ Բժիշկ Ն. Տաղաւարեանից, (Կ. Պօ-

լիս) իր հեղինակութիւնից մի ֆրանսերէն գիրք՝ L'Univers et Sa Formation:

6 — Խմբագրութեան կողմից (Լօնդօն) մի օրինակ Նոր-Կեանք կիսամսեայ հանդէս (շարունակվում է ուղարկել):

7 — Պ. Մինաս Լազարեանից (Մոսկուա) մի գիրք՝ Աշխարհաբարեան Մատեն:

8 — Պ. Գառնիկ Տօղրամաճեանից (Ռուսչուկ) երկու օրինակ Մարդու մը Պատմութիւնը (վէպ, Վահան Շահրիման), և նոյն վէպերի ընկերութեան միջոցաւ վաճառուածների 25 % ը նուէր ընկերութեան, նոյնպէս Նոր-Երգարաններէն 10 % ը:

9 — Պ. Ղազար Բողասից (խմբագիր, Կ. Պօլիս) մի օրինակ Հանրագիտակ շաբաթաթերթ (մինչև 7 ամիս ստացուած է):

10 — Պ. Ռուբէն Բերբերեանից (Ռոստով Դոնի վրա) իր հեղինակութիւնից մի գիրք՝ Մեր Նորագոյն Բանաստեղծները, I Մաս:

---

1898 Մարտ 1 ից 1899 Սեպտեմբեր 1 գնուած գրքեր

1 — Uranie, *Comille Flamarion* ;

2 — Histoire de l'Orient , *Maspero* :

3 — Life and exploration of *Fritjof Nanzen* :



4 — Առողջապահութիւն, Դոկտոր Ն. Տաղաւարեան:

---

1898 Մարտ 1-ից 1899 Սեպտեմբեր 1 կարդացված դասախօսութիւններ

1 — Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Օդը առողջապահական տեսակէտից:

2 — Եղիա Սուսանեանց՝ Մանկանց կրթութիւնը:

3 — Ղազար Աֆ. Գորոյեանց՝ Պարսկահայոց Անցեալը:

4 — Գէորգ Չիլինկիրեան՝ Միսը առողջապահական տեսակէտից:

5 — Արեգնազով Ալէքսանեան՝ Հրաբուխներ և Երկրաշարժ:

6 — Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Անձնապահութիւն:

7 — Նիկոլայ Տէր Յովհաննիսեան՝ Կերը և նրա ազդեցութիւնը:

8 — Վահան Թամզարեան՝ Նանսէնի ճանապարհորդութիւնը:

9 — Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Գինեմոլութիւն:

10 — Վահան Բժշկեան՝ Սնունդ:

11 — Լեւոն Գէորգեան՝ Լեզուների ծագումը:

12 — Մելքոն Շահբազեան՝ Կնոջ կոչումը:

13 — Ջեմս Գրինֆիլդ՝ Ընկերական խնդիրներ:

14 — Արշակ Յ. Ասման՝ Ատրպատականի տնտեսական դրութիւնը:

15— Միրզա Մելիք-Սայադեանց՝ Հասարակական վարք ու բարք:

16— Ջէմս Գրինֆիլդ՝ Քաղաքկն. տնտեսութիւն:

17— Լեոն Գեւորգեան՝ Հայոց հին գրականութիւնը:

18— Ջէմս Գրինֆիլդ՝ Քաղաքական տնտեսութիւն (շարունակութիւնը):

19— Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Բժշկին պարտականութիւնները հանրային գործերում:

20— Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Հագուստները Պատմական և աշխարհագրական տեսակէտից:

21— Ջէմս Գրինֆիլդ՝ Ընտանիքը Պատմական տեսակէտից:

22— Մարտիրոս Յարութիւնեան՝ Կովկասի հայոց Նորագոյն Գրականութիւնը:

23— Գրիգոր Եղաջանեան՝ Տեղեկէր:

24— Վահան Բժշկեան՝ Նորէր կազմութիւնը.

25— Նիկոլայ Տ. Յովհաննէսեան՝ Քուն եւ երազ:

26— Տիգրան Ռաշմաճեան՝ Մանկանց Ֆիզիքական կրթութիւնը:

27— Տիգրան Ռաշմաճեան՝ Մանկանց մտաւոր կրթութիւնը:

28— Տիգրան Ռաշմաճեան՝ Մանկանց Բարոյական կրթութիւնը:

29— Վահան Բժշկեան՝ Նորէր կազմութիւնը (շարունակութիւն:

30— Մարտիրոս Յարութիւնեան՝ Թատրոնի



ծագումը, նպատակը և օգուտը ընդհանրապէս, և Հայկական Թատրոնը Տաճկաստանում, Ռուսաստանում և Պարսկաստանում մասնաւորապէս:

31— Արշակ Մեհրաբեան՝ Ռուսաստանի գիւղացիներ և ժողովրդական դպրոցներ:

32— Արմենակ Տէր Զաքարեան՝ Կամքի զարգացման պայմանները:

33— Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Մտքի ուժասպառութիւն ( Surmenage ):

34— Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Ալկոհոլականութեան վտանգները:

# ՀԱՇՈՒԵ

## 1898 Մարտ 1-ից

## ԹԱՒՐԻԶՈՒ ԼՍԱՐԱ-

## ՊԱՐՏՔ

| | ղռան | կոպ. |
|---|---|---|
| Տեարակ թուղթ և ծրար . | 18 | 30 |
| Ծառաների վարձ . . . | 70 | 60 |
| Փոստի ծախք . . . | 10 | 70 |
| Տպագրութեան ծախք . . | 114 | — |
| Կաշ կարասիք . . . | 126 | — |
| Փայտ . . . . | 64 | 40 |
| Երկու կնիք ընկերութեան անունով | 34 | — |
| Գնուած գրքեր . . . | 93 | 55 |
| Չրգանձուած անդամավճարներ . | 30 | — |
| Ապառիկ . . . . | 3 | — |
| Կանխիկ դրամ . . . | 282 | 95 |
| | 847 | 50 |



# ԿՏԻՈՒ

## 1899 Սեպտեմբեր 1

## ՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՊԱՀԱՆՋՔ

| | ղռան | կոպ. |
|---|---|---|
| Անդամավճարներ . . . | 694 | — |
| Նուէր Պ. Առաքէլ Աֆրիկեանից . | 20 | — |
| » » Խաչիկ Սարաճեանից . | 20 | — |
| Գանձանակից . . . | 13 | 50 |
| Գանձելի անդամավճարներ . . | 30 | — |
| Նախկին գանձապահից ստացած . | 45 | — |
| Պարիզի գրքերի հաշուից մնացորդ. | 25 | — |
| | 847 | 50 |

## ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

( 1898 Մարտ 1-ից 1898 Սեպտեմբեր 1 )

Տիկին Վերժինէ Կ. Փաշայեան
Օրի. Հռիփսիմէ Փուզինեան
Աբեգնազով Ալէքսանեան
Գէորգ Զիլինկիրեան
Դոկտ. Կ. Յ. Փաշայեան Նախագահ
Մելքոն Շահբազեան Գանձապահ
Վահան Բժշկեան Քարտուղար

---

( 1898 Սեպտեմբեր 1-ից 1899 Սեպտեմբեր 1 )

Աբեգնազով Ալէքսանեան
Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Նախագահ
Մելքոն Շահբազեան
Նազար էֆ. Գորոյեանց
Նիկոլայ Տէր Օհանեան՝ Գանձապահ
Սարգիս Անդրէասեան՝ Քարտուղար
Վահան Բժշկեան

---

( 1899 Սեպտեմբեր 1-ից 1900 Սեպտեմբեր 1 )

Տիկին Յորտանս Դաւթեանց
Արշակ Մեհրաբեան՝ Քարտուղար
Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Նախագահ
Մարտիրոս Յարութիւնեան՝ Փոխ-Նախագահ



Նազար էֆ. Գորոյեանց
Վահան Բժշկեան՝ Գանձապահ
Տիգրան Ռաշմաճեան:

---

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1 — Դատախօսութիւնից յետոյ ամէն ունկնդիր ազատ է խօսած նիւթի մասին իր դիտողութիւններն և բացատրութիւնները յայտնել, նախագահի հաւանութիւնը ստանալուց յետոյ:

2 — Վիճաբանութեանց միջոցում արգելւում է խնդրից շեղվել և անձնական նկատողութիւններ անել:

3 — Լսարանական սրահում ծխելը արգելուած է:

4 — Դատախօսութեանց միջոցում արգելւում է խօսակցել:

5 — Լսարանը նախագահի յայտարարութեամբ փակուելուց յետոյ միայն ունկնդիրները կարող են մեկնելու:

6 — Քաղաքավարական պատշաճի օրինաց համաձայն իւրաքանչիւր ունկնդիր պարտաւոր է առաջին տեղը տալ կանանց:

7 — Ներելի չէ քաղաքական հանգամանք ունեցող հարցեր առաջարկել և կամ վիճել այդ կարգի խնդիրների վրայ:

8 — Լսարանական Ընկերութեան անդամներն ազատ են ընկերութեան սեփական գրքերից վերցնել ու կարդալ, միայն պարտաւոր են դառ-

գանձապահին կանխիկ յանձնել գրքի կրկին արժէքն մի ստացագրով, և գիրքը վերադարձնելուց յետ ստանալ թէ աւանդ թողած փողը և թէ ստացագիրը:

9 — Որոշեալ պայմանաժամում եթէ գիրքը չը վերադարձվի, ընկերութիւնը իրաւունք կունենայ աւանդ ձգված փողը յետ չը դարձնելու:

10— Այն կարգապահական կանոններին չը համապատասխանող անձը, նախագահի կողմից նկատողութեան կ'ենթարկվի:

11 — Նախագահի դասախօսած ժամանակ, փոխ-նախագահը կը նախագահէ Լսարանին, նոյնպէս Նախագահի բացակայութեան ժամանակ:

12— Լսարանում ցաւալի և կարգը խանգարող դէպքերի կրկնութեան տեղի չը տալու համար, Վարչութիւնը կը դիմէ բարձր հեղինակութիւն ունեցող մարմինների միջամտութեան:

---

1899 Սեպտեմբեր 30

Ծանօթ.

---

Ընկերութեանս ապահով հասցէն է
Salle de Conférence arménienne. Tauris - (Perse)

A la Rédaction,
de la Revue arménienne
"Ararat"

Etchmiadzine
(Russie)

A la Rédaction
de la Revue arménienne
« Louma ».

Tiflis
Caucase

(Russie)